ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/118 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.07.2020թ. ժամը 10:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Ստեփանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /գնահատող/

Արմեն Հակոբջանյան /բացող/

Սամվել Մուսոյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Նանե Կարապետյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/118 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/118 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Արկիտետտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ | luciospeca@libero.it |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները:

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | |
|---|---|---|---|
| | | «Արկիտեկտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ն ներառյալ |
| 1 | **18553760** | - | - |
| 2 | **17500000** | 14583333 | 17500000 |

**6. Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

6.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ քան 2020թ հուլիսի 27-ին ժամը 11:00-ին:

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 27.07.2020թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Ստեփանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/

Խորեն Մնացականյան /գնահատող/

Արմեն Հակոբջանյան /բացող/

Սամվել Մուսոյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Նանե Կարապետյան

**7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

7.1 Արձանագրել, որ «Արկիտետտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Երաշխիքի բնօրինակը հրավերով սահմանված կարգով և ժամկետում մինչև 24.07.2020թ ժամը 17:00-ն, չի ներկայացվել նախարարություն, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության պահանջներին և համաձայն հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի՝ հիմք է հանդիսանում հայտը մերժելու համար: Ընդունվել է ի գիտություն նաև այն, որ «Արկիտետտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ-ն բանավոր կերպով տեղեկացրել է, որ Երաշխիքի բնօրինակը սահմանված ժամկետում ֆաքսի միջոցով ուղարկվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, սակայն արձանագրվել է, որ վերջինս այն չի ստացել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

7.2 «Արկիտետտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1 դիմում-հայտարարությունը և հավելված 2 գնային առաջարկը, որում նշված է ԱԱՀ-ի հաշվարկված գումար, ներկայացվել են հայերեն տարբերակով, իսկ մնացած՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը, նախկինում կատարված

նմանատիպ պայմանագիրը և կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը՝ իտալերեն, ինչը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

8.1 Հաշվի առնելով, որ Իտալիայի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի հայտում առկա են բազմաթիվ հարցեր, կասեցնել գնահատման գործընթացը և համաձայն ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետի դիմել.

8.1.1 ՀՀ ֆինանսների նախարարություն հավաստիանալու՝ արդյո՞ք կան ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակիցների համար Երաշխիքի ներկայացման ժամկետների որևէ առանձնահատկություններ, արդյո՞ք ֆաքսով ներկայցված Երաշխիքը կարող է համարվել բնօրինակ, Երաշխիքի իսկությունը ստուգելու ձևը, պե՞տք է արդյոք պահանջել Մասնակցից իտալերեն լեզվով ներկայացված Երաշխիքի, ինչպես նաև նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի և կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքի թարգմանված տարբերակը, հաշվի առնելով, որ հրավերով հայտի ներկայացումը նախատեսված է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

8.1.2 ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանից ելնելով, ՊԵԿ՝ հավաստիանալու հավելված 2՝ գնային առաջարկում նշված ԱԱՀ-ի հաշվարկված գումարի իսկության համար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

8.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանում ստանալու հաջորդ օրը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 31.07.2020թ. ժամը 12:00-ին**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Արմինե Ստեփանյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամ՝ | Լուսինե Իգիթյան /գնահատող/ |
| | Խորեն Մնացականյան /գնահատող/ |
| | Արմեն Հակոբջանյան /բացող/ |
| | Սամվել Մուսոյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Նանե Կարապետյան |

**9. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված պարզաբանման և մերժված մասնակցի վերաբերյալ.**

9.1 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ. թիվ 01.1/26-1/11311-2020 գրությունը և սույն արձանագրության 7-րդ կետը՝ «Արկիտետտո Լուչիո Սպելա» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել լայացած, ոչ մի հայտ չներկայացվելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել լայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

10.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ ետը՝ «Արկիտեկտո Լուչիո Սպեկա» ՍՊԸ-ի տվյալները՝ ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս նումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արմինե Ստեփանյան /նախագահ/

---------- Լուսինե Իգիթյան

---------- Խորեն Մնացականյան

---------- Արմեն Հակոբջանյան

---------- Սամվել Մուսոյան

---------- Նանե Կարապետյան /քարտուղար/